# ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

## SEMANARIO SARDARABAD

Fiel expresión del pensar Demócrata Liberal de las colectividades armenias de Sudamérica

BUENOS AIRES, AÑO VII Nº 158 — Jueves, 1º de octubre de 1981

### ARRIBA A BUENOS AIRES

# VAHRAM MAVIAN

**de la Fundación Gulbenkian de Portugal**

El sábado a las 11 horas, en el vuelo regular e Varig, hará su arribo a nuestra capital, uno e los responsables de la Sección Armenio de a Fundación Calouste Gulbenkian de Portugal, uien lo hará acompañado de su distinguida sposa. El ilustre visitante es un conocido escritor y poeta, que ha brindado varias obras a la teratura armenia.



# ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ ՀԱՐԱՒ. ԱՄԵՐԻԿԱ

Ուրախութեամբ կ'իմանանք, թէ սփիւռքահայ անուանի գրող եւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժինի պատասխանատուներէն Պրն. Վահրամ Մավեան, յառաջիկայ շաբաթ պիտի ժամանէ Պուէնըս Այրէս:

Պրն. Վահրամ Մավեան Սփիւռքի թէ Հայրենիքի մէջ սիրուած ու փնտռուած գրող մըն է: Հեղինակն է «Յամեցող Վերադարձ» բանաստեղծութիւններու շարքին եւ «Հայու Բեկորներ», «Անկապ Պրագիր» «Ամէն Տեղ Հայ Կայ» արձակ գործերուն:

Պրն. Մավեանին կ'ընկերանայ նաեւ իր համեստափայլ տիկինը:

Բարի գալուստ եւ բարի կեցութիւն կը մաղթենք յարգելի հիւրերուն:

# EXITOSA CULMINACION DE LAS X OLIMPIADAS DE LIGA DE JOVENES DE UGAB

(pag. 4 y 5)

## IMPORTANTE DONACION A LA ASOCIACION CULTURAL TAKEYAN

Durante la séptima Convención Americana de la Asociación Cultural Tekeyan, acerca de la cual informáramos oportunamente, dos miembros activos de la institución, el Sr. Sami Totah y su señora, Ani, realizaron una importante donación.

La misma consiste en inmuebles por valor de U$S 30.000.

El matrimonio Totah es oriundo de Beirut, El Líbano, donde han realizado sus estudios primarios, secundarios y universitarios.

Ya allí, eran fervientes colaboradores de la Asociación Cultural Tekeyan, institución para la que desarrollaron importantes actividades, labor que continúan desde 1971, en los E.E.U.U., año en el que se establecen definitivamente en ese país.

A partir de ese momento, sus nombres y los de sus familias han estado íntimamente ligadas a la Unión General Armenia de Beneficencia ya a la Asociación Cultural Tekeyan.



# NUEVO APORTE CULTURAL ARMENIO A LA ARGENTINA

Vahakn Davtian, nació en Arapkir, Armenia occidental en 1922.

Destinó toda su vida a la poesía, hecho que lo ha colocado en un primerísimo lugar entre los escritores armenios contemporáneos.

Además de desempeñarse como redactor de "Kragán Tert" (Periódico Literario) y de "Haireniki Tzain" (Voz de la Patria) ha escrito numerosas obras. Entre ellas: "Primer amor", "El amanecer del mundo", "Camino a través del corazón", "El alba en Londres", "Tondraguetziner", "Tormenta estival", "Humo de cigarrillo", "La canción del vino", "Obras (dos tomos) y "Libro azul", además de obras teatrales en prosa.




"Libro azul", de 1978, fue distinguido con el máximo Premio del Estado de Armenia. Hoy, todos los amantes de la poesía tienen la oportunidad de leer las obras de este galardonado escritor y poeta, en idioma castellano, gracias a una edición realizada en la Argentina, por el Sr. Sergio Davidian, quien, muy gentilmente ha enviado un ejemplar del "Libro azul" a nuestra redacción.

Agradecemos, desde ya el gesto del Sr. Davidian, que nos da la oportunidad de difundir una brillante obra, con una excelente traducción, realizada por el Sr. Berg Agemian, entre nuestros lectores.

1921

# CENA ANIVERSARIO

## 60º ANIVERSARIO DE LA ORGANIZACION DEMOCRATA LIBERAL ARMENIA

**12 DE NOVIEMBRE DE 1981**

1981

# …Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԼԻԿԱՆԵՐՈՒ 10-ՐԴ …ԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՄՈՆԹԷՎԻՏԷՈՅԻ ՄԻՍԱՔ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԻՆ ՄԷՋ

75 տարիներ առաջ , Բարեգործականը հայ որբեր կը հաւաքէր հաց տալու համար , իսկ այսօր ՝ ան հայ երիտասարդին կու տայ Կրթութիւն , Մշակոյթ եւ Առողջ Մարմին »



…o a la Sra. Arpiné Kouyoumdjian y al Sr. José



Խուան Գարլոս Ծրնազեան (Պ. Այրէս) Ֆութպոլի երկրորդ մրցանակակիր

…Սեպտեմբերի 23–27ը, Հ.Բ. …Միութեան Մոնթէվիտէոյի …մնաճիւղի կազմակերպու…ամբ, «Միսաք Գույումճ…ն մարզադաշտին մէջ տեղի …եցան Միութեան Սան Փաւ…, Գորտոպայի, Պուէնոս …րէսի եւ Մոնթէվիտէոյի Ե…րիտասարդաց Լիկաներու 10րդ …լիմպիական խաղերը:

…Արդարեւ, Ուրուկուաւհայ …գութը, շնորհիւ Հարաւային …Ամերիկահայոց Բարերար …ր Միսաք Գույումճեանի …քերուն, օժտուեցաւ գեղե… եւ արդիական մարզա…շտով մը՝ որուն հանդիսա…որ բացումը կատարեց Միութեան Ցկեանս Նախագահ Տիար Ալեք Մանուկեանը՝ 1978–ին: Այս մարզադաշտը եկաւ իր մէջ ամրապնդելու Մոնթէվիտէոյի երիտասարդութիւնը եւ մասնաւորապէս մարզասէր պարման-պարմանուհիները:

10րդ Ողիմպիական խաղերու հանդիսաւոր բացումը կատարուեցաւ Սեպտեմբերի 23–ին, ժամը 20–ին, Ուրուկուայի Խորհրդարանի շէնքէն բերուած կրակի բոցավառումով: Ապա Նուպարեան-Ալեք Մանուկեան վարժարանի աշակերտները ներկայացուցին հայկական պարեր: Խօսք առին Մոնթէվիտէոյի մասնաճիւղի վարչութեան Նորընտիր ատենապետ՝ Պրն. Գարլոս Երկաթագործեան, Ուրուկուայի Ողիմպիական խաղերու Յանձնախումբի Նախագահ Փրոֆ. Թրիկօ եւ Մոնթէվիտէոյի Երիտասարդաց Լիկայի Ատենապետ՝ Տօքթ. Էտուարտօ Քէօրօղլեան, եւ կարդացւեցաւ Ուրուկուայի Հանրապետութեան Նորընտիր Նախագահ Վսեմութիւն Կրեկորիօ Ալվարէզի շնորհաւորական նամակը՝ որ ընդունուեցաւ երկարատեւ ծափահարութիւններով: Վերջաւորութեան, շուրջ 250 երիտասարդներ միաբերան երգեցին Միութեան քայլերգը եւ ուխտեցին հաւատարիմ մնալ Միութեան գաղափարականին:

Չորս օրեր շարունակ, Բարեգործականի մեծ ընտանիքի Հարաւային Ամերիկայի երիտասարդներն ու երիտասարդուհիները, եղբայրական ջերմ մթնոլորտի մէջ իրարու հետ մրցեցան ֆուտպոլի, պասքէթպոլի, վոյելպոլի, սեղանի թենիսի եւ ճատրակի մէջ, այցելեցին Ազատարար Արթիկասի դամբարանը եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին, գումարեցին խորհրրդակցական ժողով, կազմակերպեցին պարահանդէս Երեւան 50 Նուագախումբի ընկերակցութեամբ, մասնակցեցան Ս. Ներսէս Շնորհալի Եկեղեցւոյ կիրակնօրեայ Ս. Պատարագին:

Կիրակի Սեպտեմբեր 27ին, տեղի ունեցաւ հրաժեշտի ճաշկերոյթն ու մրցանակներու բաշխումը: Առաջին տեղը գրաւած էին Պուէնոս Այրէսի մարզիկները: Խօսք առաւ Մոնթէվիտէոյի վարչութեան փոխ ատենապետ Պրն. Լեւոն Պետիկեան, որմէ ետք գեղեցիկ երգ մը ներկայացուց Սիլվիա Սեմերճեան, դաշնակի ընկերակցութեամբ Օր. Մարիա Ռոսա Աթթարեանի: Առողջապահական պատճառներով Բարերար Տիար Միսաք Գույումճեան անձամբ չէր կրցած ներկայ գտնուիլ այս հանդիսութեան: Այդ պատճառով ալ, վարչութիւնը իր երախտագիտական յուշանուէրը հանդիսաւորապէս յանձնեց Բարերարուհի Տիկին Արփինէ Գույումճեանին:

Ապա խանդավառ ելոյթներ ունեցան Մոնթէվիտէոյի Վարչութեան ատենապետ՝ Պրն. Գարլոս Երկաթագործեան, Գորտոպայի Վարչութեան ատենապետ՝ Պրն. Միկէլ Էֆդանեան եւ Պուէնոս Այրէսի Վարչութեան ատենապետ՝ Պրն. Յովսէփ Եուսէֆեան, որ ի միջի այլոց ըսաւ. «75 տարիներ առաջ, Բարեգործականը հայ որբեր կը հաւաքէր հաց տալու համար, իսկ այսօր՝ ան հայ երիտասարդին կու տայ կրթութիւն, մշակոյթ եւ առողջ մարմին»:

Այս գիտակցութեամբ եւ ոգիով, եւ Բարեգործականի գաղափարականով տոգորւած երիտասարդները հրաժեշտ առին Մոնթէվիտէոյէն, յաջորդ տարի կրկին անգամ հանդիպելու պայմանով:




Ռ. Սարաֆեան եւ Մ. Էքշեան (Պ.Այրէս) Իգական սեռի հանդիպումներուն՝ Ա. կարգի մրցանակով



Թավլիի Պ. Այրէսի խումբը առաջին կարգի մրցանակով

# Հայաստանը Միջազգային Ցուցահանդէսներու Մէջ

Անցեր են տարիներ: Անցեր էինք աքսորի եւ արիւնի ճամբաներէն. մեր դէմքին եւ ժպիտին վրայ կար անապատներու փոշիին ու կիզիչ արեւին գոյնն ու դրոշմը: Տեսեր էինք շատ բան, բայց կրցեր էինք դիմադրել եւ ապրիլ, ապրի՜լ: Գիրքերն ու ուսուցիչները ըսեր էին մեզի, որ զաւակներն ենք հնադարեան շինարար ժողովուրդի մը, որ ունեցեր ենք Ոսկեդար, Մեսրոպ Մաշտոց, գրականութիւն եւ արուեստներ, ունեցեր ենք մանրանկարչութիւն մանաւանդ՝ անկորնչելի: Որ ունեցեր ենք մեծ արքաներ՝ Տիգրան Մեծն ու Պապ Թագաւորը, որ մեր ժողովուրդը տեսեր է մեծ յաղթանակներ, մեծ ողբերգութիւններու առընթեր: Որ ապրեր եւ ստեղծագործեր է անընդհատ, դարեր, դարեր շարունակ:

Մենք չէինք ճանչցեր հայրենիքի մը առաւելութիւններն ու կենսունակութիւնը, մեր ոտքերն ու ձեռքերը չէին շօշափած հողն ու կանանչը Հայաստանի: Ոգեղինական էր մեր հայրենասիրութիւնը:

Անցեր են տարիներ, հիմա հայր ենք արդէն:

Երէկի արհամարհուած եւ լքուած երկիրը, վաթսուն տարուան ընթացքին դարձած է խոյանքներու ընդունակ երկիր: Այսօր ան կը մասնակցի Միջազգային ցուցահանդէսներու, ընդլայնելով իր յարաբերութիւնները բազմաթիւ երկիրներու հետ, ներկայացնելով նոյնատեն հնադարեան ժողովուրդի մը մտքի եւ ձեռքի նորագոյն ստեղծագործութիւնները: Եւ աննշան երեւոյթ չէ այս մասնակցութիւնը:

Հայաստանի տաղաւարը ունէր յատկանշական բովանդակութիւն մը, իրապէս գեղեցիկ: Հայրենի հողին, ծառերուն, ծաղիկներուն եւ բնութեան բոյրն ու գոյնը կարծես կար՝ սրահը շրջապատող որմերուն վրայ: Հոն, մեծադիր եւ գունաւոր, կախուած էին հայրենիքի տեսարժան վայրերու, հնադարեան վանքերու, եկեղեցիներու լուսանկարներ, հաճելի այլազանութեամբ մը:

Խորապէս տպաւորիչ էին Սեւանի շրջապատն ու մէջտեղը կապոյտ գոյնով Սեւան լիճը ներկայացնող մաքէթը, Երեւանն ու իր շրջապատը, Հայաստանի հողային տարածութիւնը ներկայացնող գեղարուեստական կառոյցով մաքէթները:

Առանձնապէս ուշագրաւ էր նաեւ հանքային քարերու հաւաքածոն, որուն վրայ իրենց գեղեցիկ գոյները կը տարածէին նշանաւոր տուֆ քարերու տեսակները: Մեծապէս տպաւորիչ էին նաեւ փայտի վրայ փորագրութիւններով հարուստ յուշանուէրները:

Ուրիշ անկիւն մը, կարեւոր տեղ մը կը գրաւէին յախճապակիէ շինուած բիւրեղեայ զարդամանները, գաւաթներն ու ծաղկամանները այլազան, բաց գոյներով: Ցուցահանդէսէն չէին կրնար բացակայ ըլլալ Հայաստանի քոնեակը, գինին եւ այլ հանքային ջուրերն ու ըմպելիները, իրենց այլազան ու բազմազան տեսակներով:



Հայրենի Պետական Ներկայացուցիչ՝ Եուրի Խոճամիրեան կ'ընդունի աղ ու հացի աւանդական դիմաւորումը, մինչ վարչապետ Սարգսեան բաժակը կը բարձրացնէ Հայ ժողովուրդի կենացը:

Խիստ յատկանշական էր սակայն, Հայաստանի կենդանական աշխարհին յատկացուած բաժինը: Բոլոր այցելուները հիացումով կանգ կ'առնէին հոն: Անոնք, որոնք կարդացած են Վախթանկ Անանեանի որսորդական պատմուածքները, ուրախութեամբ սրահին մէջ պիտի գտնեն հեղինակին սիրած արջն ու եղնիկը, նապաստակն ու կաքաւը, գայլն ու աղուէսը, արագիլն ու առծիւը, իշխանաձուկը, եւ այլ թռչուններու տեսակներ: Իրապէս գեղեցիկ, բնական գոյներով:

Մոնթրէալի «Մարդն ու Աշխարհը» միջազգային ցուցահանդէսէն երբ դուրս կ'ելլէք, կարծես կը տանիք ձեզի հետ փոքրիկ համայնապատկերը հայրենի երկրին, ուր իրարու հետ շաղկապուած են ներդաշնակօրէն բնութիւնն ու մարդու քրտնաջան աշխատանքը:

Այո՛, այսօր Հայաստանը ներկայ է ամէն տեղ, շատերու հետ, շատերու նման:

Պ.Մ.

### ՀԱՅ ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐՈՒ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մոսկուայի երաժշտական շրջանակներու մէջ, չորս տարիէ ի վեր, իրենց մասին խօսիլ կու տան դաշնակահար երկուորեակներ՝ քոյր ու եղբայր, Նատալիա եւ Ալեքսանդր Բաղդասարեան:

Անոնք յաճախ հանդէս կու գան իբրեւ *սոլիստ*ներ Մոսկուայի ֆիլհարմոնիայի:

Վերջերս յաջող նուագահանդէս մը տուած են Մոսկուա, մեկնաբանելով յատկապէս իրենց համար գրուած գործեր:



Հայրենիքի Պետական Ներկայացուցիչ՝ Կարլէն Ղամպարեան կ'ընդունի բարիգալստեան ծաղիկի ներկայացումը

# Վարչապետ Ֆ. Սարգսեան Ժողովրդային Խանդավառ Ընդունելութեամբ Կը Դիմաւորուի Մոնթրէալի Օդանաւակայանին Մէջ

# ՌԱԿ-ի Ամերիկայի Արեւմտեան Շրջանի 60-րդ Պատգամաւորական Ժողովը՝ Տարունական Վերելքի Երաշխիք

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լոս Անճէլըսի, Սան Ֆերնանտօ Հովիտի, Ֆրէզնօի, Սան Ֆրանսիսքօի եւ Վէնքուվըրի Ակումբներու պատգամաւորներու մասնակցութեամբ, Յունիս 12-13, Ուրբաթ եւ Շաբաթ օր, Լոս Անճէլըսի մէջ գումարուեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ամերիկայի Շրջանի վաթսուներորդ Պատգամաւորական Ժողովը, հիւրընկալութեամբ Լօժէն Բաբագեան Ակումբի:

Վաթսուներորդ Պատգամաւորական Ժողովի ընթացքին, Ամերիկայի Արեւմըտեան շրջանի բոլոր Ակումբները ներկայացուցին տարեկան գործունէութեանց իրենց տեղեկագիրները: Եւ անոնց ունկնդրութենէն ետք, պատկառելի ժողովը բարձրօրէն գնահատեց մեր ղեկավար ընկերներուն բեղմնաւոր աշխատանքը:

Տեղի ունեցան գաղափարներու սպառիչ եւ շինիչ փոխանակումներ, երբ քըննարկուեցան մեր գաղութն ու առ հասարակ սփիւռքահայութիւնը յուզող ազգային կենսական հարցերը:

Ժողովի ընթացքին նկատելի էր երիտասարդ սերունդի ներկայութիւնը, մինչ հետզհետէ կը նօսրանայ երէց կուսակցականներու շարքը: Մխիթարական ու քաջալերիչ էր երեւոյթը, որ հինի փորձառութեան կու գար միանալ խանդավառ երիտասարդութեան թարմ շունչը, թէ՛ ղեկավարութեան եւ թէ զանազան ազգանուէր գործունէութիւններու մէջ:

Ժողովի նիստերը անցան կատարեալ կարգապահութեամբ, կուսակցական գիտակցութեամբ եւ ողեւորուած իրատես ու ողջամիտ որոշումներն ու բանաձեւերը անգամ մը եւս ուղեցոյց պիտի ծառայեն Ռամկավար Ազատական Կուսակցութեան ազգային եւ գաղութային ձեռներէց գործունէութեան:

Մեր կուսակցական շարքերն ու ղեկավար ընկերները հրաժեշտ առին 60-րդ Պատգամաւորականէն առաւել եւս զօրացած, առաւել եւս զօտեպնդուած, Ռամկավար Ազատական Կուսակցութեան փառք, ազգաշէն եւ խիզախ իտէալներով:

